Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնությունը և ջերմ շնորհավորանքներն ենք հղում բոլոր կանանց Մարտի 8-ի տոնական առիթով:

Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է, որ այս ուրախաբեր տոնը բերկրանքով, ջերմությամբ և հուսավառ լավատեսությամբ լցնի բոլոր կանանց, հայ մայրերի, քույրերի ու դուստրերի սրտերը, որպեսզի հավատարիմ իրենց լուսերամ մայրերի կերտած հայ կնոջ առաքինազարդ նկարագրին՝ շարունակեն նվիրյալ առաքելություն իրականացնել՝ ի խնդիր այսօրվա մեր հայրենական և ազգային-հասարակական կյանքի շինության ու զորացման:

Մեր սրտարուխ աղոթքն է, որ ընտանիքներում անփոխարինելի դերակատարություն ունեցող և տարբեր ասպարեզներում շնորհակալ գործունեություն իրականացնող կանանց նվիրումն ու ծառայասիրությունն առավել արդյունավորվեն հայրենի սուրբ ավանդներով զավակներ կրթելու և արժանավոր քաղաքացիներ դաստիարակելու աստվածահաճո գործում: Թող Երկնավոր Տերն իր հանապազ խնամքի և օրհնության ներքո պահպանի բոլոր տիկնանց և օրիորդաց՝ պարգևելով անանց երջանկություն և անսպվեր արևշատություն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
8 մարտի 2005 թ.